

ԱՐՑԱԽԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Ստեփան ՀԱՍԱՆ-ԶԱԼԱԼՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի փորձագետ

Արցախի Հանրապետությունը ավելի քան 20 տարեկան է: Մինչև պետականություն հաստատելը Արցախն անցել է անկախության ձեռքբերման երկար ճանապարհ: V դարի վերջին հիմնվում է թագավորություն, որի օրոք ընդունվել է աշխարհի առաջին սահմանադրությունը¹, XII դարի վերջին ձևավորվում են Խաչենի եռաձյուղ իշխանությունները², իսկ վերջիններիս հիմքի վրա XVI դարի երկրորդ քառորդում հիմնում են մելիքությունները³, այնուհետև՝ XX դարի սկզբին, Արցախի ժողովրդական կառավարությունը⁴, ապա նույն դարի առաջին քառորդում որպես խորհրդային տիպի պետականություն վերածվել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի⁵: Իսկ XX դարավերջին համաժողովրդական հանրաքվեի միջոցով Արցախը հռչակվում է անկախ հանրապետություն:

Պետականություն կերտելու այս երկարատև գործընթացում յուրաքանչյուր ինստիտուտ զգալի նշանակություն է ունեցել հաջորդ պետականության կայացման հարցում:

Սույն հոդվածում մենք հանգամանորեն անդրադառնալու ենք այդ ինստիտուտներից մեկի՝ մելիքությունների իրավական կարգավիճակի ուսումնասիրությանը:

Արցախի Առանշահիկների նախարարական, ավելի ուշ՝ V դարում ձևավորված թագավորական տան հիմքի վրա XII դարի երկրորդ կեսին գոյացան երկու իշխանություններ՝ Ներքին Խաչենի և Հաթերքի: Դարավերջին այս երկձյուղ իշխանությանը ավելանում է երրորդը՝ Վերին Խաչենի կամ Ծարի իշխանությունը: Սրանով կարծեք թե ավարտվում է ֆեոդալական Արցախի քաղաքական համակարգի ձևավորման բարդ ու երկարատև գործընթացը: Արդյունքում XII դարի վերջին արդեն Արցախում գոյություն ունեին Առանշահիկների թագավորական տոհմից սերած երեք խոշոր ու հզոր իշխանություններ՝ Ներքին Խաչենի (ընդգրկել է Խոխանաբերդի շրջանները, Խաչեն և Կարկառ գետերի հովիտները և Մյուս Հաբանդի մի զգալի մասը), Վերին Խաչենի կամ Ծարի (ընդգրկել է Վաղուհասից ու Ջերմուկ-Իսթիսուից վերև՝ մինչև Սևանա լճի արևելյան ա-

¹ Տե՛ս Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարազ Առաքելյանի, Երևան, 1969 թ., էջ 36:

² Տե՛ս Բագրատ Ռիլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975 թ., էջ 45, 135, 145, 152:

³ Տե՛ս Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանց, Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895 թ., էջ 784; И. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI – начале XIXвв., Ленинград, 1949 г., с. 100; Առաքել Ղավրիժեցի, Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարազ Առաքելյանի, Երևան, 1988թ., էջ 25; Մակար Եպիսկոպոս Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, Երևան, 1999թ., էջ 215; նույնի Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Թիֆլիս, 1907թ., էջ 40:

⁴ Տե՛ս Շղիշէ Իշխանեան, Լեռնային Ղարաբաղ 1917-1920, Երևան, 1999 թ., էջ 174; Нагорный Карабах в 1918-1923 гг., сборник документов и материалов, Ереван, 1992г., док. N 8, с. 13-15.

⁵ Տե՛ս Нагорный Карабах в 1918-1923 гг., док. N 451, с. 650.

փերը) և Հաթերքի (ընդգրկել է Տրտու (Թարթառ) գետի միջին ավազանը, այժմ էլ պահպանվող Հաթերք գյուղի շրջակայքը)⁶:

Վերջինը մարեց 1214 թ. իշխան Վախթանգի մահով⁷, իսկ Ներքին Խաչենի ու Վերին Խաչենի իշխանությունները, գոյատևելով թաթար-մոնղոլական դժնդակ տիրապետության ժամանակներում ու նրանց հետքերով եկած գարա-գոյունլու (սև ոչխար) և աղ-գոյունլու (սպիտակ ոչխար*) թուրքմեն քոչվոր ցեղերի** ասպատակությունների օրերում, պարսկական տիրապետության հաստատման սկզբից ավելի մանրացան՝ կոչվելով մելիքություններ: Մելիքություն հասկացությունը և դրա հետ առնչվող այլ հարցեր բազմիցս քննության են առնվել պատմաբանների կողմից, սակայն այն մինչ օրս չի ստացել իր քաղաքագիտական գնահատականը:

Դեռևս մեծանուն Րաֆֆին իր հանրահայտ «Խամսայի մելիքությունները (1600-1827)» կոթողային աշխատության մեջ մելիքների մասին գրել է հետևյալը. «Վերջին դարերում նախարարական տների փոխարեն երևան եկան մելիքները, որոնց իշխանությունը ավելի կանոնավոր ձև ստացավ Շահ-Աբաս մեծի օրերից (1603): Պարսից այդ աշխարհաչեն թագավորը, որի քաղաքական հայացքները օտարազգիների վերաբերությամբ բոլորովին տարբեր էին իր նախորդներից, ավելի բարվոք էր համարում իր հպատակ այլասեռ ժողովուրդներին կառավարել հենց իրենց ներկայացուցիչների ձեռքով և դրանով ամրացնել ամբողջ պետության մեջ համերաշխության կապերը: Նա առաջինը եղավ, որ հաստատեց հայոց իշխանների «մելիք» տիտղոսը, որ կրում էին ավելի հին ժամանակներից: Դրանով Շահ-Աբասը կամեցավ վարձատրել այն մեծ ծառայությունը, որ հայոց մելիքները կատարեցին նրա՝ օսմանցիների դեմ ունեցած հաղթությունների մեջ»⁸: Պետք է ասել, որ Արցախի քաղաքական համակարգում մելիքությունը՝ որպես քաղաքական ինստիտուտ, անցել է ձևավորման բավականին երկար ճանապարհ: Միջնադարյան Արցախի քաղաքական համակարգում նախքան «մելիք» տերմինի գործածության մեջ մտնելն ու արմատավորվելը տեղական ֆեոդալ-կառավարիչները՝ իշխանները, կոչվել են «պարոն» հայերենացված տիտղոսով: Այսպես, XIII դարում Վերին Խաչենի իշխան Գրիգորը՝ Հասանի ու Դոփի որդին, որը Վրաց արքունիքի աթաբեկ Իվանեի որդու՝ Ավագի, Արցախի իշխանաց իշխան Հասան-Ջալալ-Դուլայի ու մյուս հայ իշխանների հետ մասնակցել էր թաթար-մոնղոլների արշավանքներին դեպի Կարին, Կապադովկիա և այլուր, վերադառնալուց անմիջապես հետո 1244 թ. գրած իր հիշատակա-

⁶ Տե՛ս Բագրատ Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 45, 135, 145, 152:

⁷ Տե՛ս Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, աշխարհաբար թարգմանությունը, ներածությունը և աստղանիշերով ծանոթագրությունները Գևորգ Թոսունյանի, Երևան, 2001 թ., էջ 188:

* Բազմաթիվ հեղինակներ չիմացության կամ այլ պատճառով նշված ցեղախմբերի անունները գրել են և շարունակում են գրել «կարա-կոյունլու», «ղարա-ղոյունլու», «ակ-կոյունլու», «աղ-ղոյունլու», որոնք չեն արտացոլում արտասանության ճիշտ ձևը: Մենք պահպանել ենք թյուրքական արտասանությունը:

** Ենթադրվում է, որ սրանք սև ոչխարների (գարա-գոյունլու) և սպիտակ ոչխարների (աղ-գոյունլու) ցեղախմբեր են անվանվել իրենց ունեցած տարբեր գույնի ու տեսակի ոչխարների հոտերի պատճառով: Այս երկու ցեղախմբերը դավանում էին մահմեդականության տարբեր ճյուղեր. գարա-գոյունլուները շիաներ էին, իսկ աղ-գոյունլուները՝ սուննիներ (տե՛ս Հակոբ Սանանդյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1977թ., էջ, 350-380):

⁸ Րաֆֆի, Երկերի ժողովածու 10 հատորով, հ. IX, Երևան, 1987թ., էջ 417-418:

րանում Ավագին իր պարոնն է համարում. «Անդ (Կեսարիայում - Բ. Ու.) առեալ զԱւետարանս պարոնն իմ Աւագն և ետ ինձ և իմ խնդալից եղեալ...»⁹:

Ահա «պարոն» տիտղոսի կիրառման մեկ այլ օրինակ, որ վերաբերում է նույն Դոփյան Գրիգոր իշխանի և նրա կնոջ Ասփայի մշակութանապաստ գործունեությանը: «Թարգմանչաց» անունը կրող Ավետարանը ստանալու և իրենց տոհմական տապանատանը՝ Խաթրավանքին նվիրելու առթիվ ամուսինները թողել են հիշատակարան, որտեղ մասնավորապես ասվում է. «Ջմեծ եւ զամենաւրինեալ պարոնաց պարոն զԳրիգոր որդի Դոփին եւ զամենագովելի զբարեպաշտ ամուսին իւր զպարոն Ասփայն զստացողք եւ զարդարիչք սուրբ աւետարանիս յիշեցէք ի Քրիստոս»¹⁰: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գրիգոր իշխանի կինը՝ Ասփան, մահացել է 1311թ.¹¹, կարող ենք ասել, որ վերոնշյալ հիշատակարանը գրվել է XIV դարի սկզբին: Նույն դարի վերջից սկսած արդեն՝ «պարոն» տիտղոսը գործածված ենք տեսնում նաև Արցախի գերագահ իշխանների՝ Հասան-Ջալալյանների տանը: XIV դարի վերջին Արցախ-Խաչենի իշխանաց իշխանն էր Իվանե II Հասան-Ջալալյանի որդի Ջալալ III-ը, որին ժամանակագիրը պատվում է «պարոն» տիտղոսով. «ՊԼԲ (1383) էր, մեհեկի ամսի ԻՉ (26) էր*, որ կազմեցաւ, որ է սուրբ աւետարանս Մեծ Կողմանց Խաչենոյ եպիսկոպոսարանէն Մայրաքաղաքէնս, իշխանութեան պարոն Ջալալին, եպիսկոպոսութեան տէր Գրիգորին Գեռաքարեցին...»¹²: Հասան-Ջալալյանների իշխանական տանը «պարոն» տիտղոսի գործածությանը հանդիպում ենք նաև հետագա տասնամյակներում: Այսպես, Գանձասարի եկեղեցու հյուսիսային պատի կենտրոնական ճակատամասին փորագրված է. «ԿԱՄԱԲՆ ԱՄՍՈՒԾՈՂՅ ԵՍ ՍԱՅՏՈՒՆՍ ՈՐԴԻ ՊԱՐՈՆ ԱՂԲԱՍՏ[ԻՆ] ՏԿԻ ԻՄ ՀԱՅՐԵՆԱՑՆ ՉՏԱՆԾԱՁՈՐ Ի ՍՈՒՐԲ ՌԻՍՏԱ ԳԱՄԽԱՍԱՄԱՅՐԱ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ ՏԷՂԻ ԵՂԻՎՅԻՆ ՍՈՂՔԼՎ ԵՏՈՒՆ ՏԱՐԱՆ: Գ: ԺԱՍ. ՈԿ ՉԱՅՍ ՀԱՅՐԵՆԻՔՍ ՀԱՆՅՐՂ Է ԵԿԵՂԵՑՈՒՄ :ԳՃԺԸ: ՀԱՅՐԱՊԵՏԱՑ ՆՁՈԿԱԾ Է: ԹՎԻՍ: ԹՃԺԸ: (1467)»¹³: Իսկ Խաչենաձորի Գետամիջի Սուրբ Աստվածածին վանքում 1473թ. ընդօրինակված Ավետարանի գրիչն իր ժամանակը նշել է որպես «...ի տէրութեան տեղոյս պարոն Վէլիջանին...»¹⁴: «Պարոն»-ը ֆրանսերեն «baron» բառն է, որ գալիս է միջին լատիներեն «baro» (հայերեն՝ իշխանավոր, տեր) բառից, իսկ վերջինս էլ՝ հին բարձր գերմաներեն «baro» (հայերեն՝ ազատ մարդ) ձևից, որը բուն նշանակում է «պատերազմիկ»¹⁵: Հին հայ իրավունքի մասնագետ Խաչիկ Սամվելյանը, քննության առնելով «պարոն» տերմինը, գրել է. «...պարոն տերմինը...Արևմտյան Յեվրոպայի միջնադարյան ֆեոդալական բարոն – baron բառի հնչյունաբանական ձևափոխումն է: Ամենայն հավանականությամբ՝ այդ տերմինը փոխանցվել է Ջաքարյան Հայաստան Կիլիկյան հայ թագավորությունից: Վերջինս, սերտ քաղաքական ու առևտրական

⁹ Բագրատ Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 190:

¹⁰ Մակար եպիսկոպոս Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 309:

¹¹ Տե՛ս Բագրատ Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 318:

* 1383թ. հուլիսի 9-ին (տե՛ս նույն տեղում, էջ 303):

¹² Մակար եպիսկոպոս Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 295:

¹³ Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, կազմեց Սեդրակ Բարխուդարյան, Երևան, 1982 թ., էջ 42:

¹⁴ Մակար եպիսկոպոս Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 287:

¹⁵ Հրաչյա Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. IV, Երևան, 1979 թ., էջ 65-66:

հարաբերություններ պահպանելով միջնադարյան Յեվրոպայի ֆեոդալական հասարակությունների հետ, նմանապես անմիջական շփում ունենալով Կիլիկիայի վրայով անցնող խաչակրաց զորքերի հետ, յուրացրել էր և հարմարեցրել տեղական հայ ֆեոդալական սիստեմին Արևմտյան Յեվրոպայի ֆեոդալական բազմաթիվ տերմիններ... Մատենագրական ու արձանագրական աղբյուրներից կարելի յե յեզրակացնել, վոր պարոն տերմինը նույնանիշ ե իշխան բառին»¹⁶: XVI դարի երկրորդ քառորդից Արցախի քաղաքական համակարգում սկսում է գործածվել «մելիք» տիտղոսը, որը, կիրառումից աստիճանաբար դուրս մղելով «պարոն» տիտղոսին, նույն դարի վերջից սկսած արդեն դառնում է ժամանակի ֆեոդալ-կառավարիչներին դիմելու հիմնական ձևը: Այս փոփոխությունն իհարկե պատահական չէր: Բանն այն է, որ XVI դարի սկզբում Հայաստանի մեծագույն մասը, այդ թվում Արցախը, ընկնում է նորակազմ կզլբաշների Սեֆյան պետության տիրապետության տակ¹⁷: Վերջինս իր հետ հայ քաղաքական մշակույթ է բերում ֆեոդալական հիերարխիայի իր համակարգը: Այս մասին Լեոն գրել է. «16-րդ դարի սկզբից է, որ Ղարաբաղի իշխողներն սկսում են «մելիք» տիտղոսը կրել, որ սեմական բառ է և նշանակում է «թագավոր»: Այդ ժամանակից առաջ նրանք սովորաբար «իշխան» տիտղոսով էին հիշատակվում: Մեզ թվում է, թե առանց իմաստի չէ այս հանգամանքը: 16-րդ դարից էլ, ինչպես գիտենք, կազմվում է նոր Սեֆյան Իրանը. և, անշուշտ, այդ շահերի հաստատած կարգն էր, որ Ղարաբաղի հայ իշխանությունները ճանաչեն Պարսկաստանի բարձր վեհապետական իրավունքները և հաստատվեն շահերի կողմից, անվանվելով մելիք. իհարկե, ոչ թե այս բառի հին և իսկական իմաստով (թագավոր), այլ իբրև գավառական մասնավոր կառավարիչներ»¹⁸: Իրենց նորաստեղծ պետությունը ամրացնելու ու հզորացնելու, այդպիսով հզորացող թյուրքական պետության առաջն առնելու նպատակով պարսից շահերն իրենց տիրապետության ծայրամասային երկիր Հայաստանում, մասնավորապես Արցախում իրենց համար ստեղծեցին հուսալի հենարան՝ հանձինս հայ իշխանական տոհմերի: Այդ իշխանական տների ներկայացուցիչներից շատերին, որոնք, ինչպես տեսանք, կոչվում էին «իշխան» կամ «պարոն», առաջին անգամ շնորհեցին «մելիք» տիտղոսը՝ տալով համապատասխան իրավունքներ ու պարտականություններ:

«Մելիք» տերմինը արաբական «malik»-«մալիք» բառն է: Այն թյուրքական արտասանությամբ հնչում է «melik»-«մելիք», որը նշանակում է «տեր, իշխան», ինչն էլ գալիս է «mlk» «տիրել, իշխել» ընդհանուր սեմական արմատից¹⁹: Հայ քաղաքական իրականության մեջ մելիքական իրավունքին վերաբերող պատմությանը հայտնի առաջին հրովարտակը պատկանում է Իրանի շահ Թահմասպ I-ին (1524-1576թթ.)²⁰: XVI դարի երկրորդ կեսի սկզբին նա շահական հրովարտակով հաստատել է Մելիքեկի սեփականության իրավունքը Գեղարքունիք գավառի ութ գյուղերի նկատմամբ: Ահա այդ հրովարտակի հայերեն թարգմանությունը. «Որովհետև Մելիք-Բէկ քրիստոնեայն յայտնեաց թէ ի հրովարտակիս յիշեալ գիւղօրայքն, որք ի նահանգի ծովակին Գեօզայի, ժառանգութիւն նորա են սեպիական և ունի առ ի հաստատութիւն բանից իւրոց զգիրս

¹⁶ Խաչիկ Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմությունը, հ. I, Յերևան, 1939թ., էջ 243:

¹⁷ Հակոբ Մանանդյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1977թ., էջ 417; И. Пемпушевский, նշվ. աշխ., էջ 69.

¹⁸ Լեո, Երկերի ժողովածու, հ. III, գ. II, Երևան, 1973թ., էջ 16:

¹⁹ Տե՛ս Հրաչյա Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. III, Երևան, 1977 թ., էջ 294:

²⁰ Տե՛ս Վահան Բայբուրդյան, Իրանի պատմություն, Երևան, 2005 թ., էջ 303:

օրինադրողաց մերոց ի ձեռին իւրում. վասն որոյ և մեք հաստատեցաք լինել ժառանգութիւն նորին որպէս էին, և ո՛չ ոք առանց իրաւանց օրինաց լինիցի ձեռնամուխ սեպհական հողոյ նորայ, և թողեալ ենք նմա առնել զշինութիւն և զցանս, զի մի՛ հասցէ պակասութիւն արքունի հասութիցն, յայսմ մասին զարգելական հրաման իմ սաստիկ գիտացեալ, մի՛ ընդիմասջիք. և յամենայնի ամենայնիս զնոր հաստատութիւն մի՛ խնդրեսջիք. յամսեան ռամագանի 966 թուականի տաճկաց (1557)»²¹: Աղբյուրներից հայտնի է նաև, որ Թահմասպ 1-ն իր կառավարման երկրորդ կեսից՝ 1550-ական թվականների սկզբից սկսած, ձեռնամուխ է եղել ֆեոդալական աստիճանակարգի կանոնակարգմանը և հստակեցմանը: Ի շարս բազմաթիվ նորամուծությունների՝ նրա հրամանով է մասնավորապես սահմանվել, որ այսուհետ «խան» տիտղոսն ավելի բարձր է համարվելու, քան «սուլթան»-ը²²: Ենթադրելի է, որ հենց այս ժամանակ էլ հստակեցվել է «մելիք» տիտղոսի շնորհման կարգն ու ֆեոդալական հիերարխիայիում այդ տիտղոսը կրող անձի իրավունքների և պարտականությունների հարցը:

Բացի շահական հրովարտակներից՝ մելիքության ինստիտուտին առնչվող տեղեկություններ գտնում ենք նաև հայ մատենագիրների երկերում: Այսպես, XVII դարի հայ պատմիչ Առաքել Դավրիժեցին, խոսելով Օսմանյան թյուրքերի բռնություններից ու հարստահարություններից նեղված վրացի, քուրդ և հայ իշխանավորների ու տանուտերերի մասին, գրել է, որ երբ վերջիններս իմանում են շահ Աբբաս 1-ի դեպի Անդրկովկաս նախատեսած արշավանքի մասին, 1603/4 թվականներին ընդառաջ են գնում և խնդրում, որ շահն իր «փրկարար» երթն արագացնի: Հայաստանից Պարսից շահին ընդառաջ են գնացել. «...Աղվանից երկրից և հայոց ազգից գնացին Սարուխան բեկը և իր եղբայր Նազարը Ոսկանապատ գյուղից²³, Օղլան քեշիշը և իր եղբայր Ղալաբեկին՝ Հաթերք գյուղից²⁴, Ջալալ բեկն իր եղբոր որդիներով Խաչենից²⁵, մելիք Սուջունը՝ Դիզակից²⁶, մելիք Փաշիկը՝ Քոչիզ գյուղից²⁷, մելիք Բարան՝ Բրիտաս

²¹ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանց, Տեղագիր Գեղարքունի Շովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գավառ, էջ 784:

²² Տե՛ս Ս. Սեմյաշևսկուս, էջ 100.

²³ Ոսկանապատ գյուղը գտնվում է նախկին Գարդման գավառում, հիմնված է Գանձակ գետակի ձախ ափին: Գարդմանը համապատասխանում է Աղբեջան հորջորջվող պետության կողմից բռնագավթված Ղազախի, Թովուզի հյուսիսային և Շամքորի շրջանի արևմտյան մասերին (տե՛ս Առաքել Դավրիժեցի, Պատմություն, էջ 530):

²⁴ Հաթերք գյուղը գտնվել է Արցախի Հաթերք գավառում: Հիմնադրված է Տրտու (Թարթառ) գետի ձախ ափին: Այժմյան Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղն է (տե՛ս Առաքել Դավրիժեցի, Պատմություն, էջ 530):

²⁵ Խաչենը Արցախի կենտրոնական գավառն էր, մոտավորապես ընդգրկում էր ներկայիս Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի հիմնական և Մարտակերտի շրջանի հարավային մասերը (տե՛ս Աշոտ Մելքոնեան, Հայկական Քարվաճառ եւ Աղահեճք գաւառները պատմութեան մէջ, «Դրօշակ», թիւ 15, Երեւան, 1993թ., էջ 26):

²⁶ Դիզակը Արցախի գավառներից էր: Սահմաններն էին հարավից Արաքսը, արևելքից՝ Մուղանի դաշտը, հյուսիսից՝ Քյոնդալյան գետը, արևմուտքից՝ Քիրս լեռը (տե՛ս Առաքել Դավրիժեցի, Պատմություն, էջ 531): Համապատասխանում է այժմյան Արցախի Հանրապետության Հաղարթի շրջանին (տե՛ս Աշոտ Մելքոնեան, Հայկական Քարվաճառ եւ Աղահեճք գաւառները պատմութեան մէջ, «Դրօշակ», թիւ 15, Երեւան, 1993թ., էջ 26):

²⁷ «Քոչիզ»-ը Շովատեղ գյուղի հին անունն է, որ գտնվում էր Արցախի Վարանդա գավառում (Առաքել Դավրիժեցի, Պատմություն, էջ 531): Համապատասխանում է այժմյան Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Շովատեղ գյուղին:

գյուղից²⁸ «...մելիք Հայկազը՝ Քշտաղ գավառի²⁹ Խանածախ գյուղից»³⁰ : Բացի մատենագրական աղբյուրներից, մելիքության ինստիտուտի մասին տեղեկություններ ենք գտնում նաև վիճակագրական արձանագրություններում: Այսպես, Վարանդայի մելիք Ավանը 1566թ. խաչքար է կանգնեցրել իր ծնողների հոգու փրկության համար՝ արձանագրելով հետևյալը. «Կամաւ ամենակալին Աստուծոյ, ես Մելիք Աւան կանգնեցի զխաչս ի փրկութիւն հօր իմոյ Մելիք Պապին, մաւրն իմոյ Խոնդի խաթունին, ով որ յիշէք ի Տէր, յիշեսցիք առ Աստուած թվ. ՌԺԵ (1566) ին»³¹: Հիմք ընդունելով Իրանի շահ Թահմասպ I-ի վերոհիշյալ հրովարտակը, իշխանության կենտրոնական ու տեղական ապարատներում վերջինիս կատարած պետական շինարարության մասին աղբյուրներում եղած տեղեկությունները, ինչպես նաև Առաքել Դավրիժեցու հաղորդումն ու Վարանդայի մելիք Ավանի կանգնեցրած խաչքարի արձանագրությունը՝ կարելի է ասել, որ Արցախի քաղաքական կյանքում մելիքության ինստիտուտը սկզբնավորվել է մոտավորապես XVI դարի երկրորդ քառորդում: Մելիքական իրավունքի մասին անժխտելի և հաստատուն տեղեկություններ ունենք արդեն XVI դարի վերջից XVII դարի սկզբից՝ կապված Իրանի շահ Աբբաս I-ի կառավարման շրջանի (1587-1629թթ.)³² հետ³³: Այժմ խոսենք «մելիք» տիտղոսը կրող անձի կարգավիճակի մասին: Մելիքության ինստիտուտի առաջացման սկզբում «մելիք» տերմինը շատ հաճախ հանդիպում էր երկակի նշանակությամբ. մի դեպքում «մելիք»-ը գյուղի կառավարիչն էր³⁴, մեկ այլ դեպքում՝ գավառի: Դա է վկայում Առաքել Դավրիժեցու հաղորդումը. Սուջումը Դիզակ գավառի մելիքն էր, Փաշիկը՝ Քոչիզ գյուղի, Բարան Բրիտաս գյուղի մելիքն էր, Հայկազը՝ Քշտաղ գավառի:

Սակայն շահ Աբբաս I-ի կառավարման շրջանից սկսած՝ հստակեցվում են «մելիք» տիտղոսի շնորհումն ու այդ տիտղոսը կրող անձի իրավունքների և պարտականությունների շրջանակը: Սա, իհարկե, պատահական չէր: Բանն այն է, որ Աբբաս I-ը լուրջ բարեփոխումներ է իրականացնում իշխանության թե՛ կենտրոնական, թե՛ տեղական մակարդակներում՝ դրանով աստիճանաբար տերությունը վերածելով կազմակերպված պետության³⁵:

Շահ Աբբասի իրականացրած պետական շինարարության մասին Իրանի պատմության մասնագետ Վահան Բայբուրդյանը մասնավորապես գրել է. «Շահ Աբբասը թողել էր երկրի վարչական կառավարման համակարգը այն նույն ձևով, ինչ ժառանգել էր իր նախորդներից, սակայն նա այդ համակարգը դարձրեց ավելի ձկուն ու արդյունավետ»³⁶: Ասվածի լույսի ներքո միանգամայն հասկանալի է դառնում Րաֆֆու

²⁸ Դեռևս ճշտված չէ Բրիտաս գյուղի տեղը:

²⁹ «Քշտաղ»-ը նույն «Քաշաթաղ»-ն է, որը հին Աղախեջք գավառի նոր անունն է: Համապատասխանում է այժմյան Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանին (տե՛ս Առաքել Դավրիժեցի, Պատմություն, էջ 531):

³⁰ Առաքել Դավրիժեցի, Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարազ Առաքելյանի, Երևան, 1988թ., էջ 25:

³¹ Մակար եպիսկոպոս Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 215; նույնի Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ 40:

³² Տե՛ս Վահան Բայբուրդյան, Իրանի պատմություն, էջ 313:

³³ Տե՛ս Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանց, Տեղագիր Գեղարքունի Փովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895 թ., էջ 785-794:

³⁴ Տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, հ. III, գ. I, Երևան, 1969թ., էջ 61:

³⁵ Տե՛ս Ս. Пемпушевскун, էջ 72, 81.

³⁶ Վահան Բայբուրդյան, Իրանի պատմություն, էջ 325:

հետևյալ խոսքերը. «Վերջին դարերում նախարարական հին տների փոխարեն երևան եկան մելիքները, որոնց իշխանությունը ավելի կանոնավոր ձև ստացավ Շահ-Աբաս մեծի օրերից (1603)... Նա առաջինը եղավ, որ հաստատեց հայոց իշխանների «մելիք» տիտղոսը, որ կրում էին ավելի հին ժամանակներից»³⁷: Կարծում ենք, Րաֆֆու օգտագործած «հաստատեց» բառը պետք է հասկանալ «վերահաստատել» իմաստով: Աբբաս I-ը ոչ թե նոր հիմնեց կամ սահմանեց «մելիք» տիտղոսը, այլ վերահաստատեց նախորդ շահերի կողմից ընդունածը՝ միաժամանակ նոր իմաստ և բովանդակություն հաղորդելով դրան: Այդ պատճառով էլ ասածը հիմնավորելու համար Րաֆֆին շարունակել է. «...որ կրում էին ավելի հին ժամանակներից»: Աբբաս I-ի կառավարման շրջանից սկսած արդեն հայ քաղաքական կյանքում «մելիք» ասելով հասկանում էին գավառի տիրակալ: Այդ են վկայում Աբբաս I-ի և Իրանի հետագա շահերի կողմից հայ իշխաններին տրված հրովարտակները³⁸:

Այժմ պարզենք, թե Արցախի հայ ազնվական տների ներկայացուցիչներից ով է Իրանի շահական արքունիքից առաջինը ստացել «մելիք» կոչվելու մասին հրովարտակ: Մինչ օրս կատարված ուսումնասիրությունների համաձայն՝ Արցախի հինգ գավառների տիրակալներից առաջինը Իրանի շահից գավառի մելիք կոչվելու մասին հրովարտակ է ստացել Վարանդայի մելիք Միրզաբեկը: Նա լեզգիների հետապնդումներից խուսափելու նպատակով իր ավագ եղբոր՝ Գեղարքունիք գավառի մելիք Շահնագարի հետ 1603թ. բնակություն է հաստատում Արցախի Վարանդա գավառի Ավետարանոց գյուղում³⁹: Երեք տարի անց՝ 1606թ., Պարսից շահ Աբբաս I-ի (1587-1629թթ.) հրովարտակով Միրզաբեկը նշանակվում է Վարանդա գավառի մելիքի պաշտոնում⁴⁰: Ցավոք չի պահպանվել Աբբաս I-ի հիշյալ հրովարտակը: Մելիք նշանակելու մասին պահպանված առաջին հրովարտակը վերաբերում է Վարանդայի մելիք Միրզաբեկի որդուն՝ Բաղի I-ին: Վերջինս 1633թ. Իրանի շահ Սեֆի I-ի (1629-1642թթ.)⁴¹ կողմից ստացել է Վարանդայի մելիք նշանակվելու մասին հրովարտակ, որի պատճենը հրապարակել է Մակար Բարխուտարյանցը, որը, սակայն, սխալմամբ հրովարտակի հեղինակ է համարել շահ Աբբաս I-ին (1587-1629թթ.), մինչդեռ այդ ժամանակ Իրանի շահը Սեֆի I-ն էր: Ահա այդ հրովարտակի պատճենը. «Բարձրագոյն հրաման եղաւ... Նշանաւոր քրիստոնէայ Մէլիք Բաղին յայտնում է թէ Վարանդայ գաւառի բնակիչները, նոյն գաւառի տանուտէրերի կազմած հասարակական վճռով ընտրել և ճանաչել են զինքը իրանց մէլիք, բայց յիշեալ գաւառի շրջաններից մի քանիսն՝ Մէլիք Դանիէլը... Թագաւորին մերձաւոր բարձր աստիճանաւորներն Սաֆի-ղուլի բէկ և Ալի-Մարդան բէկ իւզբաշին, Մամէդ-Բաղր-բէկ և ուրիշներն հաստատել են հպատակների հասարակական վճիռը: Այդ բանը վաւերացնելու համար ներկայացնելով վերև յիշուած հասարակական... (Մէլիք-Բաղին) խնդրում է նշանակել զինքը մէլիք յիշեալ գաւառին: Արքունի օրագրից երևում է, որ այդ գաւառի պարտականութիւնը (մելիքութիւնն) յանձնուած էր Մէլիք-Մուզաֆֆարին... Մէլիք-Մուզաֆֆարն հասարակական այդ վճռի վերայ մակագրել է, որ ինքն հրաժարում է յիշեալ գաւառի

³⁷ Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. IX, Երևան, 1987թ., էջ 417-418:

³⁸ Տե՛ս Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանց, Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գավառ, էջ 785-795:

³⁹ Տե՛ս Արտակ Մաղայան, Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ., Երևան, 2007, էջ 160-161:

⁴⁰ Տե՛ս Բագրատ Ուլուբաբյան, Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, էջ 132:

⁴¹ Տե՛ս Վահան Բայբուրդյան, Իրանի պատմություն, էջ 328:

մելիքութեան պաշտօնը կատարելուց և որ նորա եղբօր մահից յետոյ ոչ ոքի յանձնուած չէ այդ պաշտօնի կատարելն: Ռեստի յարգելով նորա (Մելիք-Բաղու) խնդիրը, մենք հրամայեցինք, համաձայն հասարակական վճռին, որը կազմել են Մելիք-Սուզաֆֆարն և ուրիշներն, մեր թագաւորական միւս շնորհների նման «Լույ-իլ» (կոկորդիլոսի տարին) ամսի ութին... (նշանակել – Ս. Հ-Ջ.) Մելիք-Բաղին մելիք Վարանդայի գաւառին, որն առաջ յանձնուած էր Մելիք-Սուզաֆֆարին և Ղարա-Կիւնին... Տաճկաց 1042 (1633) թւին հիճրի ամսուն»⁴²: Չնայած մելիքական իշխանությունը ժառանգական էր, այդուհանդերձ իշխանության ժառանգման գործընթացը մեխանիկորեն չէր կատարվում: Գոյություն ունէր մելիքի հաստատման կարգ, որտեղ առաջին հերթին հաշվի էր առնվում ժողովրդի ձայնը. «Մելիքի իշխանությունը, թեև ժառանգական, առանց ժողովրդի համաձայնության չէր իրականանում»⁴³: Որպէս կանոն մելիքացու լինում էր մելիքի ավագ որդին, որը հոր կենդանության ժամանակ կոչվում էր «մելիքգաղա», հոր մահից հետո վերջինիս փոխարինելու համար նախ պետք է ստանար տվյալ գավառի ժողովրդի համախոսականը (գրավոր համաձայնությունը) այն մասին, որ նրանք համաձայն են իրենց գավառի մահացած մելիքի փոխարեն նրա որդուն տեսնելու հոր պաշտոնում, այնուհետև մելիքացուն տվյալ համախոսականը պետք է վավերացնէր տար Ղարաբաղի բեկլարբեկի ստորագրությամբ և ապա նոր միայն կարող էր դիմել պարսից շահին՝ հաստատության հրովարտակ ստանալու համար⁴⁴:

Հարկ է նշել, որ համաձայն պարսից արքունիքում ընդունված կարգի՝ մելիքացուն բեկլարբեկի ստորագրությամբ վավերացված համախոսականի հետ միաժամանակ պետք է շահին ներակայցնէր նաև իր նախորդներին տրված շահական հրովարտակները՝ ի հավաստումն այն բանի, որ տվյալ պաշտոնը ժառանգաբար պատկանել է իրենց տոհմին⁴⁵: Շահից հաստատության հրովարտակ ստանալուց հետո մելիքացուն մինչև իր մահը համարվում էր տվյալ գավառի օրինական մելիքը: Եթե մահացած մելիքն անժառանգ էր, կամ էլ նրա ավագ որդին անչափահաս էր, ապա վերոհիշյալ ճանապարհով պետք է անցնէր մահացած մելիքի եղբայրներից առավել կարողն ու արժանավորը⁴⁶, իսկ վերջինիս անհնարինության դեպքում նրա որդիներից առավել հարմարը: Իսկ եթե մահացած մելիքի ավագ որդին չափահաս էր, սակայն անհամապատասխան տվյալ պաշտոնի համար, ապա մելիքին փոխարինում էր իր կրտսեր, չափահաս, կարող որդին⁴⁷: Արցախի «...ժողովուրդը, միշտ հավատարիմ իր հին ավանդություններին, չէր թույլ տալիս, որ խախտվեն մելիքական իշխանության վերաբերյալ կարգերը»⁴⁸: Մելիքի պաշտոնը ստանձնելու վերոբերյալ մեխանիզմը պարզորոշ վկայում է այն մասին, որ ժողովրդավարությունը Արցախում դժնդակ հարյուրամյակների բովոյ անցած պատմություն ունի: Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարող ենք վստահաբար ասել, որ Արցախի հերոսական ժողովուրդն իր կենսագործունեության ընթացքում ձևավորել է ժողովրդավարական սկզբունքներով իշխանության կազմավորման անհրաժեշտ ավանդույթներ, որոնք հաջողությամբ գործադրում է նաև մեր օրերում:

⁴² Մակար Եպիսկոպոս Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ 41-42:

⁴³ Լեո, Երկերի ժողովածու, հ. III, գ. II, Երևան, 1973թ., էջ 17:

⁴⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 17:

⁴⁵ Տե՛ս Մեսրոպե արքեպիսկոպոս Սմբատեանց, Տեղեկագիր Գեղարքունի Ծովագարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, էջ 784-799:

⁴⁶ Լեո, Երկերի ժողովածու, էջ 17-18:

⁴⁷ Մակար Եպիսկոպոս Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ Զ:

⁴⁸ Լեո, Երկերի ժողովածու, էջ 18:

Եթե հոր մահից հետո նրան փոխարինած անդրանիկ որդին կոչվում էր մելիք, ապա մյուս որդիները կոչվում էին բեկ⁴⁹: Բեկ բառն ունի մոնղոլական ծագում և նշանակում է իշխող, կառավարող, տիրող: Տվյալ գործառնությունը իրականացնող պաշտոնյաները կրում էին շահ, խան, սուլթան, մելիք տիտղոսները: Իսկ բեկն ընդհանրական անվանում էր, որը տրվում էր բոլոր նրանց, ովքեր իշխում էին⁵⁰: Հաճախ այն դառնում էր հատուկ անունների բաղադրիչ⁵¹, ինչպես օրինակ՝ Դանիել բեկ, Ջալալ բեկ, Գրիգոր բեկ և այլն: Իրենց գավառներում մելիքներն իրականացրել են լիազորություններ, որոնք դասական իմաստով բնորոշ են պետությանը: Պահպանված վավերագրերի ու աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, ի շարք բազում լիազորությունների, մելիքներն ունեցել են իրավունքներ, որոնց իրականացման շնորհիվ էր միայն հնարավոր իրենց հանձնված գավառները կառավարել հավուր պատշաճի: Դրանք հիմնականում չորսն են եղել՝ 1. զորք պահելու իրավունք⁵², 2. արդարադատություն իրականացնելու իրավունք⁵³, 3. հարկեր հավաքելու իրավունք⁵⁴ և 4. հոգևոր գործերին միջամտելու

⁴⁹ Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. IX, էջ 420:

⁵⁰ Семен Эсадзе, Историческая записка об управлении Кавказом, т. I, Тифлис, 1907г., с. 612.

⁵¹ Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճմշարտացի պատմություն, Երևան, 2000թ., էջ 150:

⁵² Ապրես Բեկնազարեանց, Գաղտնիք Ղարաբաղի, Ս. Պետերբուրգ, 1886թ., էջ 212; Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. IX, Երևան, էջ 1987թ., էջ 450; Երվանդ Լալայան, Երկեր, հ. 2, Երևան, 1988թ., էջ 244-245, 252; Մակար եպիսկոպոս Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Թիֆլիս, 1907թ., էջ Է-Թ; Գ. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, документы, СПб, 1898г., с. 339-340, 426; Армяно-русские отношения в первой трети XVIII века, сборник документов, т. II, ч. II, Ереван, 1967г., с. 15, 19, 204, 255; Արմեն Այվազյան, Արցախի հայկական բանակի իրազենը 1720-ական թվականներին, «Լուսակն», N 2, Երևան, 2010թ., էջ 8, 11; Արմեն Այվազյան, Ժողովրդագրական իրավիճակը Ղարաբաղում 1710-1720-ական թվականներին, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 1-2, Երևան, 2010թ., էջ 63; Павел Чобанян, О некоторых вопросах истории Арцаха (XIII – XIX вв.), «Պատմաբանասիրական հանդես», N 3, Երևան, 2002թ., էջ 148; Армяно-русские отношения в XVIII веке, сборник документов, т. IV, Ереван, 1990г., с. 94-95; Դիան հայոց պատմութեան, գիրք Թ, Թիֆլիս, 1911թ., էջ 25; Մեսրոպ Թադիադյան, Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր, Երևան, 1975թ., էջ 164:

⁵³ Ֆրունզե Պողոսյան, Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, «Բանբեր Հայաստանի արխիվների», N 1, Երևան, 1966թ., էջ 200; Մակար եպիսկոպոս Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Թիֆլիս, 1907թ., էջ Է; Երվանդ Լալայան, Երկեր, հ. 2, Երևան, 1988թ., էջ 241, 243, 245-247; Ապրես Բեկնազարեանց, Գաղտնիք Ղարաբաղի, Սանկտ-Պետերբուրգ, 1886թ., էջ 213; Հայ ժողովրդի պատմություն, հ. V, Երևան, 1974թ., էջ 17; Մխիթար Գոշ, Դատաստանագիրք հայոց, իրաւաբանական հետազոտութիւնք հանդերձ ծանօթութեամբք Վ. Բաստամեանց, Վաղարշապատ, 1880թ., էջ 104, 178; Արտակ Մաղայան, Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIXդդ., Երևան, 2007թ., էջ 56, 59, 61; Լեո, Երկերի ժողովածու, հ. III, գ. II, Երևան, 1973թ., էջ 23; Նոր տետրակ, որ կոչվում է հորդորակ, Երևան, 1991թ., էջ 102-103; Ա. Հովհաննիսյան, Գ. Ավետրոյանի և Գ. Շիրմազանյանի նամակափոխանակությունը Վրաստանի և Պարսկաստանի համաքարությունների մասին, «Պատմաբանասիրական հանդես», N 2, Երևան, 1963թ., էջ 213-214; Առաքել Կոստանեանց, Դիզակի մելիքությունը, «Նիւթեր հայ մելիքութեան մասին», պրակ Ա, Վաղարշապատ, 1913թ., էջ 45, 74; Լեռնիկ Մկրտումյան, Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII-XIX դդ., Երևան, 2006թ., էջ 60-61:

⁵⁴ Ֆրունզե Պողոսյան, Խամսայի մելիքությունների իրավունքներն ու պարտականությունները, «Բանբեր Հայաստանի արխիվների», N 1, Երևան, 1966թ., էջ 204; Մակար եպիսկոպոս Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Թիֆլիս, 1907թ., էջ Է-Ը; Երվանդ Լալայան, Երկեր, հ. 2, Երևան, 1988թ., էջ 242-243:

իրավունք⁵⁵: XVI դարում Արևելյան Անդրկովկասը հիմնականում գտնվում էր Սեֆյան Իրանի տիրապետության տակ: 1555թ. Ամասիայում կնքված թյուրք-պարսկական պայմանագրից հետո պարսկական գերիշխանությունն Անդրկովկասում հիմնել էր երեք ռազմավարչական միավորներ՝ բեկլարբեկություններ՝ Շիրվանի, Չուխուր-Սադի կամ Երևանի և Ղարաբաղի: Արցախը, անշուշտ, Ղարաբաղի բեկլարբեկության մեջ էր, որի կենտրոնն էր Գանձակը⁵⁶: Արցախի հինգ մելիքներից յուրաքանչյուրը ենթարկվում էր Գանձակում նստող Ղարաբաղի բեկլարբեկին: Բեկլարբեկերն իրենց ձեռքում էին կենտրոնացնում նահանգի ինչպես վարչական, այնպես էլ ռազմական իշխանությունը՝ հանդիսանալով տեղի գինված ուժերի հրամանատարը⁵⁷: Լեոն բեկլարբեկի իշխանության մասին գրել է. «Բեկլերբեկի (սարդարի)* իշխանության տակ գտնվում էին բազմաթիվ ծառայողներ, որոնց միջոցով նա կառավարում էր երկիրը: Գյուղերի կառավարությունը հանձնվում էր պատվավոր նայիբներին և մելիքներին: Նայիբներն այն գյուղերի համար էին, որոնք ունեին մահմեդական կամ խառն ազգաբնակչություն, իսկ մելիքները զուտ հայաբնակ գյուղերի համար: Դրանք վարչական այն ստորին պաշտոնյաներն էին (տանուտեր), որոնք կապում էին գյուղական համայնքները վիճակային խանի, բեկլերբեկի և նրանց կառավարությունների հետ: Բոլոր հրամանները վերևից ուղղվում էին այդ գյուղական պաշտոնյաներին. բեկլերբեկին կամ խաները շատ քիչ էին խառնվում համայնքի ներքին կարգերի մեջ: Սա մի հայտնի չափով համայնական ինքնավարություն էր: Այսպիսով թեև յուրաքանչյուր խան մի անսահման բռնապետ էր իր երկրում, բայց ժողովրդի սովորութեամբ իրավունքը մի հայտնի չափով սահմանափակել էր այդ բռնակալությունը»⁵⁸: 1736թ. փետրվարին Մուղանի դաշտում տեղի ունեցած կուրուլթայի՝ Իրանի ռազմաքաղաքական բարձրագույն ղեկավարության ժողովի ժամանակ Իրանի շահ է ընտրվում զորահրամանատար, թյուրքական կրիսլու ցեղախմբի աֆշար ցեղից սերած Թահմազ-ղուլի խանը՝ կոչվելով Նադիր շահ⁵⁹: Ռաֆֆին, խոսելով Իրանի նորընծա շահ Նադիրի Արցախի մելիքների նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի մասին, գրել է. «Թագադրությունից հետո Նադիր-շահը այնտեղ հավաքված ավագներին զանազան պաշտոններ և աստիճաններ շնորհելու ժամանակ վարձատրեց և հայոց մելիքների կատարած քաջագործությունները, որոնք այնքան եռանդ էին ցույց տվել օսմանցիներին կոտորելու գործում: Առանձին ֆիրմաններով նրանց կրկին հաստատեց իրանց հայրենական իշխանությունների մեջ, իրավունք տալով յուրաքանչյուրին անկախ կերպով կառավարելու երկիրը, վճարելով ամեն տարի մի որոշյալ քանակությամբ հարկ: Այնուհետև մելիքները կախումն ունենալով միայն շահից, իսկ իրանց իշխանության մեջ վայելելով ինքնավարության կատարյալ իրավունքներ, որպես վալիներ (ավատական իշխաններ) ավելի հանգիստ և ապահով դրություն ստացան և

⁵⁵ Մակար Եպիսկոպոս Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք: Արցախ, Երևան, 1999թ., 202; Արտակ Մաղալյան, Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIXդդ., Երևան, 2007թ., էջ 81; Ֆրունզե Պողոսյան, Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, «Բանբեր Հայաստանի արխիվների», N 1, Երևան, 1966թ., էջ 203; :

⁵⁶ Բագրատ Ռիւրաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975թ., էջ 347:

⁵⁷ Տե՛ս Վահան Բայբուրդյան, Իրանի պատմություն, Երևան, 2005թ., էջ 325:

* Սարդար – պատերազմների ժամանակ բեկլարբեկերը կրում էին սարդար (զորագլուխ) տիտղոսը, (տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, էջ 54):

⁵⁸ Տե՛ս նույն տեղում., էջ 61:

⁵⁹ Տե՛ս Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, թարգմանությունը բնագրից, ներածությունը և ծանոթագրությունները Քրիստինե Կոստիկյանի, Երևան, 2000թ., էջ 39:

սկսեցին ավելի ևս զորացնել իրանց ուժերը: Մի քանի մելիքներ առանձին աստիճաններ ստացան: Ջրաբերդի Մելիք-Իսրայելի որդի Մելիք-Ալլահ-ղուլին ստացավ սոլթանի աստիճան* և կոչվեցավ Ալլահ-ղուլի-սոլթան: Շահի առանձին շնորհը վայելում էր Տիգակ գավառի Մելիք-Ավանը (Եգանը), որին շահը «բաբալըղ» էր կոչում, որ նշանակում է հոգևոր հայր... Շահը շնորհեց նրան խանության աստիճան, կոչվեցավ Մելիք-Ավան-խան և կարգեց Խամսայի հինգ մելիքությունների գլխավոր. դրա մոտ էին հավաքվում վճարելիք հարկերը և դրա ձեռքով էին հանձնվում արքունի գանձարանին»⁶⁰:

Չնայած Րաֆֆին Արցախի հինգ մելիքների տարածքները Ղարաբաղի բեկլարբեկությունից դուրս բերելը շահին ենթակա դարձնելը բացատրում է մելիքների քաջագործությունները վարձատրելու Նադիր շահի (1736-1747թթ.)⁶¹ ցանկությամբ, սակայն իրականում Նադիրը ցանկանում էր պատժել Ղարաբաղի ժառանգական բեկլարբեկ Ջիադ-օղլի տոհմի խաներին, քանզի կուրուլթայի ժամանակ վերջիններս դեմ են եղել Նադիրի թագադրվելուն:

Նադիր շահը, ճանաչելով և վերահաստատելով Արցախի հինգ մելիքների դաշնային ինքնավարությունը, ստեղծել է նոր պետական կազմավորում՝ Խամսայի մելիքություններ (պարսկերեն «Մահալ-ե խամսե», հայերեն՝ «հինգ գավառ») անունով, որը ներառում էր Արցախի հայկական հինգ մելիքությունները՝ Գյուլիստանը, Ջրաբերդը, Խաչենը, Վարանդան և Դիզակը⁶²:

Այսպիսով, «Անդրկովկասում Քարթլի-Կախեթի վրացական վալիության կողքին, առաջին անգամ ստեղծվում էր նաև «Մահալ-ե խամսե» անվանվող հայկական առանձին բեկլարբեկություն, որն ընդգրկում էր պատմական Արցախն ու մինչև Արաքսի ափը ձգվող հարակից տարածքները»⁶³: Արցախի մելիքությունների տարածքները պատկերացնելու համար նշենք, որ Գյուլիստանը մոտավորապես ընդգրկում էր այժմյան Ադրբեջանի կողմից բռնազավթված Շահումյանի շրջանը և Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի հյուսիս-արևելքը, Ջրաբերդը՝ Մարտակերտի շրջանի հիմնական մասը և Շահումյանի (նախկին Քարվաճառի) շրջանի արևելքը, Խաչենը՝ հիմնականում Ասկերանի շրջանը և Մարտակերտի շրջանի հարավը, Վարանդան՝ Ասկերանի շրջանի հարավը և Մարտունու շրջանը, իսկ Դիզակը՝ Հաղուրթի, նախկին Ջեբրայիլի ու Ֆիզուլու շրջանները⁶⁴: Նադիր շահի սպանությունից (24 հունիսի 1747թ.) և Իրանի ներպետական կյանքում երկպառակության նոր շրջան սկսվելուց հետո Արցախի մելիքությունները դարձան փաստացի անկախ պետական կազմավորումներ և իրավաբանորեն մնացին այդ կարգավիճակում ընդհուպ մինչև այդ

* «Սուլթան»-ի տիտղոսը տրվում էր առանձին գավառներ կամ փոքրիկ վիճակներ տիրապետողներին (տե՛ս Ս. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI – начале XIX вв., էջ 99-101):

⁶⁰ Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. IX, Երևան, 1987թ., էջ 443-444:

⁶¹ Վահան Բայրուրյան, Իրանի պատմություն, էջ 368:

⁶² Տե՛ս Павел Чобанян, О некоторых вопросах истории Арцаха (XIII – XIX вв.), «Պատմաբանասիրական հանդես», N 3, Երևան, 2002թ., էջ 152; Արտակ Մաղալյան, Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIXդդ., էջ 34-35:

⁶³ Հակոբ Փափազյան, Մելիք-Եգանի ընդունարանի մուտքի վիճագիր արձանագրությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 5, Երևան, 1985թ., էջ 78:

⁶⁴ Տե՛ս Աշոտ Մելքոնեան, Հայկական Քարվաճառ եւ Աղախեճք գաւառները պատմութեան մէջ, «Դրօշակ», N 15, Երեւան, 1993թ., էջ 26:

երկրամասի միավորումը Ռուսաստանին (14 մայիսի 1805թ.)⁶⁵, իսկ փաստացի շարունակեցին պահպանել իրենց գոյությունը մինչև 1828թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի ռուս-պարսկական պայմանագրի կնքումը: Այսպիսով, հնարավորինս համակողմանիորեն քննելով Արցախի մելիքությունների կազմավորման ժամանակն ու իրավաքաղաքական կարգավիճակը՝ կարող ենք ասել, որ մելիքությունները, ձևավորվելով մոտավորապես XVI դարի երկրորդ քառորդում, պետականության հատկանիշներով օժտված ռազմաքաղաքական միավորներ են եղել: Հայկական ընդհանրական պետականության բացակայության պայմաններում նրանք պետականակիր սուբյեկտներ էին:

THE ESTABLISHMENT OF THE MELIQDOMS OF ARTSAKH AND THEIR POLITICAL-LEGAL STATUS

Stepan HASAN-JALALYAN

Master's Degree in Political Science

National Assembly of the Republic of Armenia

The article is dedicated to the analysis of the legal-political bases of meliqdoms of Artsakh. Using a broad range of literature, the article shows the outfalls of the establishment of meliqdoms of Artsakh and proposes the thesis according to which the Armenian authorities extended the degree of their autonomy by being granted the status of a meliqdom and, thus, became military-political units endowed with features of statehood.

Based on lithography, documents and historiography information about meliqdoms, we consider it to be likely that the institution of meliqdoms originated in the political life of Artsakh in the second quarter of the 16th century.

For the first time the article presents the five meliqdoms of Artsakh as a state institute.

The theoretical significance of the article consists in the fact that the meliqdoms of Artsakh have been examined quite well only from the historiographic perspective and have been illustrated very little from the legal and especially political perspectives. Taking that into account, there is an attempt to fill the existing gap. Moreover, in this way the article obtains state-of-the-art nature also from the point of view of practical politics. By gerrymandering the history, Azerbaijan is trying to create the legend of its own history in which it attempts to integrate the historical past of the Armenian Artsakh. In this context, the thesis that the history of Artsakh is an indivisible part of Armenian history is substantiated based on real historical facts, various documents, testimonies. It is also substantiated that for centuries there used to exist Armenian military-political units - principalities, meliqdoms.

⁶⁵ Ст. и Акты Кавказской Археологической Комиссии, т. II, Тифлис, 1868г., с. 705; Н. Дубровина, История войны и владычества русских на Кавказе, т. IV, Санкт-Петербург, 1886г., с. 424-425.